Անձնական տվյալների մշակման Ծանուցում

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը, որպեսզի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի հետ դրամական պարտավորություններ առաջացնող հարաբերությունների մեջ մտնելու նպատակով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից հարցում կատարվի «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, «Նորք տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (ԷԿԵՆԳ), և նաև վերջիններիս խնդրում եմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին տրամադրել իմ ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից կարող են հաշվի առնվել՝ ինձ հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

Ինչպես նաև համաձայն եմ, որ կնքված պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած պահի՝ առանց ինձ նախապես տեղյակ պահելու՝ հարցում կատարվի «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին նախկինում ստացված վարկային վեկույցի տեղեկատվությունը թարմացնելու նպատակով:

Տեղեկացված եմ, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին իրականացվող հարցումը հնարավոր է բացասական ազդեցություն ունենա ֆինանսական կառույցների կողմից կիրառվող սքորինգային համակարգերում ձևավորվող իմ վարկային ամփոփ գնահատականի վրա:

Սույնով նաև հավաստում եմ, որ տեղեկացված եմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Տնօրինության 09.02.2016թ. թիվ 37/1 որոշմամբ հաստատված ստորև ներկայացված Ծանուցման դրույթներին և տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) մշակի իմ անձնական տվյալները, այն է՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել իմ ինքնությունը համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի:

Իմ անձնական տվյալները մշակվելու են՝ Բանկի հետ պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների/առաջարկների/այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ իմ անձնական տվյալների հետ այնպիսի գործողություններ կատարելու համար (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն), որոնք անհրաժեշտ են սույն Ծանուցման մեջ նշված նպատակների և ՀՀ օրենսդրությամբ Բանկի վրա դրված պարտականությունների կատարմանը հասնելու համար:

Սույնով թույլատրում և լիազորում եմ Բանկին հարցում կատարել իմ աշխատանքային վայր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին (այդ թվում՝ «Նորք տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (ԷԿԵՆԳ)), «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, ինչպես նաև վերջիններին տրամադրել իմ անձնական տվյալները և ստանալ իմ մասին տեղեկություններ: Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է իմ կողմից տրված, և Բանկը ստանում է իմ անձնական տվյալները մշակելու իրավունք՝ իմ և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող/Բանկին ծառայություններ մատուցող/Բանկի համար աշխատանքներ կատարող կազմակերպություններին տրամադրելու նպատակով՝ պայմանով, որ դա անհրաժեշտ է տվյալ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

Իմ անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում՝ Բանկը պարտավորվում է դադարեցնել իմ անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել իմ անձնական տվյալները տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե իմ և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես իմ և Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Իմ անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ իմ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում իմ անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն վերջիններս պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

Անձնական տվյալների մշակման համաձայնություն տալով, համաձայնվում եմ նաև Օնլայն վարկավորման ընթացքում վեճը լուծել արբիտրաժային դատարանում: Վեճի լուծման այլ կարգ նախընտրելու դեպքում կարող եք մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այդ դեպքերի համար սահմանված ժամանակահատվածի համար:

Տալով Իմ համաձայնությունը՝ Ես գործում եմ Իմ կամքով և Իմ շահերից ելնելով: